


Մուրթ Երրորդութիւն Հայաստանեայց
Առաքելական Մայր Եկեղեցի
Holy Trinity Armenian Apostolic Mother Church

Զայն Voice
Volume XXI: Issue 4 Ապրիլ - April 2021



2226 Ventura Street • Fresno, CA 93721
(559) 486-1141 Office; (559) 486-1939 Fax
www.holytrinityfresno.org

Սուրբ Երրորդութիւն Հայաստանեայց Առաքելական Մայր Եկեղեցի
Holy Trinity Armenian Apostolic Church
Եպիսկոպոսական Պատարագ
Episcopal Divine Liturgy



Գերշ. Տ. Թորգոմ Եպս. Տօնոյեան
Առաջնորդական Անդարանիկ
պատարագ պիտի մատուցէ
Կիրակի, 11 Ապրիլ 2021
Առաւօտեան ժամը 10-ին

His Grace Bishop Torqom Donoyan
will celebrate His first Divine Liturgy
as the Prelate of the Western Prelacy
Sunday, 11 April 2021
10 AM

ԴԵ՛Ռ ԿԸ ՔԱԼԵՆՔ՝ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՀԵՏՔԵՐՈՎ

«ԵՍ ԵՄ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԿԵԱՆՔԸ»

(Յհ 11.25)

Տարիէ մը ի վեր, Երկիր մոլորակը աստուածային անմիջական այցելութեան կը սպասէ: Այցելութիւն մը, որ պիտի վերափոխէ Երկիրն ու մարդկային կեանքը, այցելութիւն մը, որուն յոյսով կ'ապրի ամէն ոք անխտիր, կը գործէ ամէն համայնք՝ իր դժուարութիւնները վերացնելու համար եւ կը գոյատեւեն ազգեր՝ իրենց սահմանափակումները ջնջելու ակնկալութեամբ: Արդարեւ, անցնող տարուան ընթացքին մարդկային կեանքը լեցուն եղաւ բազմամակարդակ մարտահրաւերներով եւ հրատապ տագնապներով, որոնց դիմաց աւելի եւս շեշտուեցաւ մարդ արարածին, բոլորի՛ս անզօրութիւնը, որովհետեւ մարդը անկարող է առանց Աստուծոյ, մարդը անստի է առանց Աստուծոյ, մարդը միայնակ է առանց Աստուծոյ: Այո՛, Երկիր մոլորակը այսօր աստուածային այցելութեան կը սպասէ, եւս առաւել՝ հայկական համայնքներու եւ հայրենական մեր ժողովուրդին զաւակները, որովհետեւ արցախեան վերջին պատերազմն ու անոր դառն հետեւանքները մինչեւ օրս տակաւին կը ցնցեն մեզ՝ մեր ազգի նահատակներուն ու մեր հայրենեաց հողերու կորուստի ահազնութեամբ, որ դառն ու բաց խոց մը ձգեց մեր բոլորին սրտին մէջ: Այսուհանդերձ, որպէս քրիստոնէայ ազգ, արտօնուած չէ մեզի իյնալ յուսահատութեան գիրկը եւ պատանքուիլ անյուսութեամբ: Այլ՝ ընդհակառակն: Այսօր, հրաշափառ Յարութեան տօնին առիթով, հրաշափառապէս այցելութիւն կը շնորհէ Փառքի Իշխանը Երկիր մոլորակին: Ահա՛ թէ ինչու, բոլորս կը հրաւիրուինք յոյսի աչքերով նայելու ոչ միայն վաղուան, այլեւ այսօրուան, որ կ'երաշխաւորէ մեր ազգի ապագան եւ մեր առջեւ բացուելիք նոր յաղթանակները, յառա՛ջ Աստուած:

Մեր Տէրը, Երկնաւոր Վարդապետը, Ազատարար Փրկիչը, Ինքը՛ Բանն Աստուած, Իր երկրաւոր կեանքի վերջին օրերուն ծաղրուեցաւ ու ձաղկուեցաւ չարակամօրէն, արհամարհուեցաւ ու ապտակուեցաւ անզօրէն, ուսերուն վրայ քղամիդ նետուեցաւ ու զլխուն փուշէ պսակ դրուեցաւ՝ առ ի նուաստացում: Ու թէւ այդ օրերու հոռմեացի զինուորներու գիշատիչ վոհմակը նաեւ անարգական հռհռոցներով մտրակի հարուածներ տեղացուց Յիսուսի մէջքին եւ մեծ ու ծանր խաչ

մը շակել տալով՝ Զայն արինկուայ քալեցուց Գողգոթայի ցառոտ ճամբաներէն, մինչեւ որ Ան բլրան վրայ խաչուեցաւ եւ դառնագոյն մահը ճաշակեց, բայց, յուրախութիւն բոլորիս, մեր Տէր Յիսուս Քրիստոսի տառապակոծ մահուան յաջորդեց յաղթական Յարութիւնը, որ կեանք սփռեց ամենուրեք, յարուցեալ կեանք եւ նոր տեսիլքներ ու թարմաշունչ արշալոյսներ պարգեւեց մարդերուն, մեզի, բոլորիս:

«ԵՍ ԵՄ ՅԱՐՈՒԹԻՒՆ»- Յարութիւնը իբրեւ գաղափարախօսութիւն, քրիստոնէական կրօնքի ամենէն հիմնական ճշմարտութիւններէն մէկն է, որուն մասին Աստուածաշունչը կը խօսի զանազան աղիթներով: Յարութիւն, որուն անդրանիկը հանդիսացաւ Ինք՝ Քրիստոս, եւ Իր օրինակով խոստում մը կտակեց բոլոր հողեղէններու. այն, որ յարութեան եւ յաւիտենական կեանքի երկնային շնորհ մը կը սպասէ բոլոր անոնց, որոնք զՔրիստոս կ'ապրին իրենց կեանքին ընթացքին եւ Յարութեան հիմնադիրին՝ Խաչեալ Յիսուսի գծած ճանապարհէն կ'ընթանան, թէկուզէ մտրակուին կամ ցաւ ապրին կեանքէն եկող տեսակաւոր հարուածներէ, տեսանելի կամ անտես չարագործ ձեռքերէ, անոնք չէ՛ն վիատիր, չէ՛ն յուսահատիր, որովհետեւ Յարութեան քրիստոսաւանդ յո՛յսը ունին իրենց հոգիին մէջ:

Ո՛վ մտրակ, քու հարուածներդ թերեւս կրնան մեռցնել մարմինս, բայց երբեք չեն կրնար սպաննել հոգիս, որ Յարուցեալ Քրիստոսին կը պատկանի:

«ԵՍ ԵՄ ԿԵԱՆՔ»- Կեանքը ամենամեծ պարգեւն է Աստուծոյ կողմէ տրուած մարդուն: Յաճախ կը խօսինք Աստուծոյ մեզի՛ տուած շնորհներուն մասին: Թէ՛ Աստուած մարդուն տուաւ հոգիի՛ անմահութիւն, օրհնեալ է Աստուած, թէ՛ Աստուած մարդուն տուաւ կամքի՛ ազատութիւն, զովեալ է Աստուած, թէ՛ Աստուած մարդուն տուաւ բանականութի՛ւն, փառաւորեալ է Աստուած: Բայց այս բոլորէն առաջ եւ այս բոլորէն վեր՝ Աստուած կեանք տուաւ մարդուն, Աստուած գոյութեան իրաւունք ու շո՛ւնչ տուաւ մարդուն, Աստուած հոգի եւ էութի՛ւն տուաւ մարդուն ու մանաւանդ՝ Աստուած Իր ինքնութենէ՛ն տուաւ մարդուն. **«Որովհետեւ Աստուած ա՛յնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր միածին Որդին տուաւ, որպէսզի անոր հաւատացողը չկորսուի, այլ յաւիտենական կեանք ունենայ»** (Յհ 3.16):

Յաւիտենական կեանք, որով Խաչեալ Յիսուս յաղթանակ կնքեց մահուան դէմ, Յաւիտենական կեանք, որով Մեռեալ Յիսուս տապանաբարը հեռացուց Իրմէ, Յաւիտենական կեանք, որով Յարուցեալ Յիսուս նոր կեանքի լոյսը շնորհեց մեզի:
Ամենաթանկագին Հայրորդիք,

Գողգոթա ապրած մեր ժողովուրդին համար որքան վեհ է ու սրբառատ Յարութեան խորհուրդը, եւ որքան գրաւիչ ու բաղձալի՛ յաւիտենապէ՛ս ապրելու, շնչելու, ըլլալու՝ գաղափարը բոլոր այն կործանումներէն եւ վայրիվեր ցնցումներէն ետք, որոնցմէ անցաւ հայ ժողովուրդը քրիստոնէական առաջին դարերէն մինչեւ օրս:

Մեր ազգի զաւակներէն շատ շատեր Յիսուս Քրիստոսի անունով հալածուած, չարչարուած եւ նահատակուած են պատմութեան ընթացքին: Հայոց սուրբերն ու բոլոր հայ անմեղ նահատակները Յարութեան յոյսին կառչած՝ բանիւ, գործով եւ ինքնընծայմամբ Քրիստոսի ուսմանը հաստատեցին Հայաստան աշխարհի մէն մի անկիւնին, բարձրացուցին մատուռ, տաճար, եկեղեցիներ, որոնք որպէս քրիստոնէական հաւատքի սիւներ ամրացան հայ ժողովուրդի հոգւոյն ու կեանքին մէջ: Նահատակութիւն ապրած, բայց Յարուցեալին փարած ազգային ո՞ր ընտանիքէն ներս այսքան ճոխ վկայութիւն կայ Աստուծոյ մասին, եթէ ոչ Նարեկացի վանականին հրաշաբեր աղօթամատեանին մէջ. «**Հայր՝ էութիւն ճշմարիտ, գոյ կատարեալ, անեղ, անսկիզբ, անժամանակ, անպատճառ, անիմանալի, անտեսանելի, անճառելի, անհաս, անզնին, անկէտ, անսահման, աներբ, անուր, անբովանդակելի, անայլայլելի, անփոփոխ, գերաբ՛ն, գերալոյս, գերանճա՛ն...**»:

Ո՛չ երէկ, ո՛չ այսօր, ո՛չ սուրբ, ոչ ալ հուրը յաջողեցան, կամ կրնան յաղթել մեր ազգի զաւակներու հաւատքին՝ Տէր Յիսուս Քրիստոսի վրայ խարսխուած: Վկայ Յեղասպանութեան նահատակ զոհերու եւ վերապրողներու թոռները, որոնք յանտն ան ազգի, յանտն ան հայրենիքի եւ յանտն ան հաւատքի իրենց երիտասարդ կեանքերը նուիրեցին զոհաբերութեան խորանին, վկայ՝ մերօրեայ վերջին գոյամարտը, որուն ընթացքին հայոց բանակի եւ կամաւորական զունդերու մատղաշ, երիտասարդ թէ հասուն տարիքի զինուորագրեալներ յարութեան հաւատքով ընդառաջ գացին ազերիաթրքական պատերազմին եւ տուն, եկեղեցի, հարազատներու կեանքեր ու հայկեան հայրենիք պաշտպանելու համար «ո՛չ» ըսին հայասպան պետութիւններու քառապատիկ հզօր բանակներուն եւ վարդա՛նաբար ինկան իրենց պապերուն արեամբ շահուած մեր հողերուն վրայ, ժայռակոտ լեռանց ստորոտը, թէ անանցանելի կիրճերու եւ գողտրիկ ձորակներու լայնքին, իրենց հոգիներէն երգելով. «**Ա՛հ, միթէ կրնա՛մ գալ Քու ետեւէդ, երբ Խաչը ուսիդ կ'ելլես Գողգոթա, բայց ի՞նչ սերտ հրապոյր, ի՞նչ բուռն ուժ է դա, որ զիս դէպի հոն ալ կը տանի Քեզ հետ**» (Եղիշէ Արք. Դուրեան):

«Որովհետեւ ով որ Աստուծմէ ծնած է, կը յաղթէ աշխարհին: Եւ աշխարհին վրայ յաղթանակ տանողը մեր հաւատքն է»: (Ա. Յհ 5.4): Այո՛, մեր նահատակները յաղթեցին աշխարհին, քանզի մեր ազգին հաւատքը Յարուցեալ Քրիստոսի վրայ ամրացած ճշմարտութիւն է, որ ինչպէս երէկ, այսօ՛ր եւս մեզ կը հրաւիրէ Յարութեան խորհուրդը դաւանելու մեր ուղենիշն ու ճանապարհը: Յիսուսի՛ արեամբ սրբացած ճանապարհը, որ մեզ պիտի տանի յաղթական ա՛յն բարձունքը, որուն խոստումը մենք ի սկզբանէ Երկինքէ՛ն ունեցանք, Յիսուսով ունեցանք. «**Ես եմ Յարութիւնը եւ Կեանքը, ան որ Ինձի կը հաւատայ, թէպէտեւ մեռնի՛ պիտի ապրի**» (Յհ 11.25):

Յարուցեալով Երկինք եւ Երկիր կը հաշտուին,

Վերին դռները կը բացուին,
Ուրկէ երկնային նուագներ կը լսուին,
Եւ զուարթուններու մատներէն ոսկեայ ձայներ կը թռչին,
Մինչ վարը, այդ պահուն, ո՛հ, ի՛նչ հրաշք,
Յիսուսականներու սրտեր ի՛նչ երանութեամբ կը տրոփեն
Եւ ի՛նչ հրճուանքով կ'արձագանգեն երկնային երգեցողութեան՝

Յարեաւ Քրիստոս, Աւետի՛ս:

Մեղքի կապանքները կը քակուին, շղթաները կը փշուրին, անէծքները կը լուծուին, անապատներ կը դալարին, ցամքած գետերը կը վարարին, աղբիւրները կը կարկաչեն եւ՝ առիծն ու գառնուկը միասին կը ճարակեն, զի մարդը կը համբուրուի իր Արարիչէն: Ծիածանը դարձեալ՝ կը կամարէ Երկիր, Խաչը կը փայլատակէ Երկինքէն, եւ Աստուած՝ Սուրբ Հոգին աղանակերպ, ձիթենեաց ճիւղով մը կապոյտներէն Երկիր կը ձգէ:

Ահա՛ այս երկնառաք ապրումներով ու Յարութեան կենարար յոյսով Ազգային Առաջնորդարանէն մեր սրտագին շնորհաւորութիւնները կը փոխանցենք Թեմիս Հոգևորականաց դասուն, Ժողովականութեան, ծխական շրջաններուն, վարժարաններու մարմիններուն, բոլոր միութիւններուն, կազմակերպութիւններուն, ու հաւատացեալ մեր ժողովուրդին եւ կ'ողջունենք՝ ըսելով.

Քրիստոս Յարեաւ Ի Մեռելոց, Օրինեալ Է Յարութիւնն Քրիստոսի:

Քրիստոսաւանդ սիրով

Աղօթարար

Թորգոմ Եպս. Տոնյեան, Առաջնորդ
Ա.Մ.Նահանգներու Արեւմտեան Թեմի

4 Ապրիլ, 2021
Լոս Անճելըս, Ա.Մ.Ն.



WE CONTINUE TO WALK THE PATH OF THE RESURRECTION

“I AM THE RESURRECTION
AND THE LIFE” (John 11:25)

The past year saw the world awaiting a divine intervention; an intervention that would transform the world and our lives, with the hope of which we live and strive and subsist amid all troubles and impediments. Undeniably, this past year was rife with a wide range of challenges and pressing crises which further affirmed that, as human beings, we are powerless, incapable, and alone without God. Yes, the world today awaits a divine intervention; in particular we, children of the Armenian nation, as we continue to face the bitter consequences of the latest war in Artsakh, the agony of lives and lands lost which has left a gaping wound in our hearts. However, it is not befitting a Christian nation to fall into despair and be shrouded in hopelessness. On the contrary; today on the glorious feast of the Resurrection, the Prince of Glory appears gloriously to the world. Thus, we are all invited to look to the present day and gaze into the future with eyes of hope, thus assuring the future of our nation and new triumphs before us by the will of God.

Our Lord, Divine Master, Redeeming Savior, He – the Word of God, was mocked, ridiculed, and beaten mercilessly in the final days of His earthly life. A cloak was placed on His shoulders and a crown of thorns on His head as a sign of disgrace. He was subjected to a brutal flogging by ruthless Roman soldiers, given a heavy cross to carry and forced to march the agonizing path to Golgotha where He was ultimately crucified and suffered an excruciating death. But to the enduring gladness of mankind, the agony of Christ’s death was followed by the triumph of His Resurrection, granting life, resurrected life, new vision, and a bright new dawn for mankind, for us all.

“I AM THE RESURRECTION” – The Resurrection, as an ideology, is the single most fundamental truth of the Christian faith, of which the Bible makes mention numerously. Christ was the first to be resurrected, and by His example He bequeathed a promise to all us mortals that the heavenly grace of resurrection awaits all those who live in Christ during their earthly lives, who walk the path of the crucified and Resurrected Christ, and who do not become discouraged and disheartened amid all of life’s blows for they carry the hope of the Resurrection in their souls.

O whip, your blows may kill my body, but they can never kill my soul which belongs to the Resurrected Christ.

“I AM THE LIFE” – Life is the greatest gift bestowed by God to man. We often speak of God-given graces: that God gave man immortality of spirit – blessed is the Lord; that God gave

man free will – praised is the Lord; that God gave man reason – glorified is the Lord. But first and foremost, God gave life to man. God gave man the right to exist; God gave man breath, spirit, and substance. Above all, God gave of His essence to man, **“For God so loved the world that He gave His only begotten Son, that whoever believes in Him should not perish but have everlasting life” (John 3:16).**

Everlasting life, by which the crucified Christ triumphed against death,
Everlasting life, by which the deceased Christ moved the gravestone away,
Everlasting life, by which the Risen Christ graced us with the light of the Resurrection.

Beloved compatriots,

As a nation which has suffered our own Golgotha, how magnificent and hallowed is the message of the Resurrection, how captivating and desirable, to live and breathe for all of eternity after all of the devastation and ups and downs the Armenian people have endured from the first centuries of Christianity to the present day. Throughout history, countless children of our nation have been persecuted, tortured, and martyred in the name of Jesus Christ. Embracing the hope of the Resurrection, Armenian saints and all innocent Armenian martyrs established Christ’s teaching throughout the Armenian lands by word, by works, and by self sacrifice. They built chapels, churches, and cathedrals which became rooted as pillars of the Christian faith in the hearts and lives of the Armenian people. Truly it is only from within a martyred yet resurrected nation that one can find such an eloquent testimony to God as from the marvelous prayer book of St. Gregory of Nareg; **“Father, true essence, perfect being, uncreated, without beginning, timeless, causeless, incomprehensible, invisible, ineffable, unattainable, incomprehensible, inscrutable, infinite, boundless, without “when,” without “where,” inconceivable, unalterable, unchangeable, supernatural, luminous, ultra-ineffable...”**

Not yesterday nor today, neither sword nor fire has succeeded nor can prevail over the faith of our nation’s children which is anchored in our Lord Jesus Christ. The proof is in the grandchildren of Genocide martyrs and survivors who dedicated their young lives to the altar of sacrifice for nation, for homeland, and for faith. The proof is in our latest war, during which members of the Armenian army and volunteer units, young and old alike, with faith in the Resurrection valiantly fought against the militarily superior Azeri-Turkish forces in defense of homes, churches, lives and lands, and who fell on the same lands liberated by the blood of their forefathers, at the foot of craggy mountains, impenetrable passages, and alongside delicate valleys, their spirits chanting, **“Is it possible that I can follow as You ascend Golgotha with the Cross on Your shoulders? But what strong allure, what fierce power is that, which also leads me there alongside You” (Archbishop Yeghishe Tourian).**

“For whatever is born of God overcomes the world. And this is the victory that has overcome the world - our faith” (1 John 5:4). Yes, our martyrs overcame the world because the faith of our nation is truth reinforced by the Risen Christ and invites us to profess the message of the Resurrection as our guide and path; the path sanctified by Christ’s blood which will lead us to triumphant heights, the promise of which we received at the outset from the heavens, from Jesus Himself Who proclaimed, **“I am the resurrection and the life. He who believes in Me, though he may die, he shall live” (John 11:25).**


Heaven and earth are reconciled through the Resurrected,
The doors above are opened,
From where heavenly melodies are heard,
And golden reverberations flutter from the hands of angels,
While below, at that very moment, oh what marvel,
As the hearts of those belonging to Jesus beat with elation,
Christ is Risen, good tidings.

The bonds of sin are released, chains are shattered, curses are unraveled, deserts become lush, dried rivers flow, fountains murmur, and the lion and the lamb pasture together as man is embraced by his Creator. The rainbow arches across the horizon once again, the Cross beams from the sky, and God, the Holy Spirit in the form of a dove, an olive branch in its beak, ascends to the heavens.

With these inspired sentiments and with the living hope of the Resurrection, from the Western Prelacy we extend our greetings and heartfelt congratulations to our clergy, councils, parishes, schools, organizations, and faithful, exclaiming,

Christ is risen from the dead, blessed is the Resurrection of Christ.

With Christian love
Prayerfully



Bishop Torkom Donoyan, Prelate
Western United States

April 4, 2021
Los Angeles, USA

Get Well Soon!

The Pastor and the Board of Trustees wish to express
to all church members who are ill and not feeling well,
(listed or not listed below) a speedy recovery.

Albert Abrahamian
Alice Michigian

It's a wonderful time of the year. Our evenings are almost warm enough to stay outside, and all the trees and plants are happy, pushing green.


As we celebrate Jesus' resurrection, we need to remember that this celebration is very important for the Christian church, and it should be the most important event in our lives and for our faith. The resurrection gives me hope that after we die, Jesus promised us eternal life and that gives me hope and reason to live.

Sunday School is in full swing and thank you parents for bringing your children to learn God's word. Please thank your teacher for volunteering their time for our church.

We have the first visit to Fresno from our new Serpazan Bishop Torkom Donoian on April 11th. Please come to church to hear his message and support his new position..

We are going to begin hall remodel in mid July, so it's time for us all to get to work and raise the funds to pay for this beautiful endeavor.

Support your aid organizations, get involved in church events and live a holy life.



- \$950,000
- \$900,000
- \$850,000
- \$800,000
- \$750,000
- \$700,000
- \$650,000
- \$600,000
- \$550,000
- \$500,000
- \$450,000
- \$400,000
- \$350,000
- \$300,000
- \$250,000
- \$200,000
- \$150,000
- \$125,000
- \$100,000
- \$75,000
- \$50,000
- \$25,000



If you can, please donate towards our remodel project. Thank you.

BIRTH ANNOUNCEMENTS



Congratulations to Randal and Irina Knar on the birth of their son, **JULIAN SANTURIAN KNAR**, born Thursday, March 4, 2021. We also congratulate his big brother Edward and Aunts Jane Knar and Karine Chalyan.

Congratulations to Armen and Breanne Khasigian on the birth of their daughter, **MALIA GRACE KHASIGIAN**, born Wednesday, March 17, 2021. We also congratulate grandparents Paul & Connie Khasigian and Tom & Susan Loyd, Uncles: Aaron, Andrew, Alan, Amos, Dustin, and Jordan and Aunts: Leanne and Amber.



BAPTISM



On March 13, 2021, **ARA PATRICK KEVORKIAN STOCKDALE HACKETT**, received the Sacrament of Baptism. We congratulate parents Vincent Bosley and Audra Kevorkian Stockdale, Grandmother, Kathryn Kevorkian Stockdale, Godparents Eddie Samules and Sandra Cortez, and big sister, Avyana. *We congratulate Baby Ara on achieving this spiritual milestone.*



We wish Joe Tomassian a very happy 90th Birthday!



FUNERAL SERVICES



Graveside services were held for **MRS. AZADOUHIE CHADERJIAN** on Saturday, March 13, 2021 at Masis Ararat Armenian Cemetery. Our sincere condolences to her children Flora and Garo Istanboulian, Maral and Alex Andekian, Paul Chaderjian; grandchildren Ani and Erik Pfeiffer, Alene and Erik Mestjian, Armen Andekian, and Alina Andekian.

Graveside services were held for **MRS. HELEN ELEANOR SARKISIAN** on Thursday, March 18, 2021 at Masis Ararat Armenian Cemetery. Our sincere condolences to her son Sam Sarkisian.



CONDOLENCES




ELEANOR VIRGINIA BABIGIAN passed away on February 26, 2021. Our sincere condolences to the Babigian, Soghomonian, Cloud, Bashian and Kuckenbecker families.

Our sincere condolences to Arda Tonigian Tokdas at the passing of her cousin **SARKIS (SAKO) KHACHADOURIAN**, who passed away in Beirut—Lebanon.



May God bless their souls!



Different Groups of People Around Jesus' Cross.

Every year, Christians worldwide commemorate the crucifixion of Jesus Christ and His death to redeem us from our sins as well as celebrate His resurrection. The four Gospels tell us about Jesus' crucifixion and show the reaction of people who witnessed everything.

Even to this day, we still can see individuals or groups who are similar to the ones in Jesus' time. First, Pilate, a Roman governor of Judaea, knew that Jesus was innocent. He could witness, defend and release Jesus, but he didn't. Pilate was afraid to lose his political and social position. Many people don't share their faith or witness to Jesus, fearing to lose their lives, status, and social positions, Luke 23:1-7, 13-24.

Second, Herod Antipas was a Roman tetrarch of the region of Galilee and Peres. He knew Jesus, and he is the one who imprisoned John the Baptist and then ordered his execution. When Herod saw Jesus, he asked Jesus to perform a miracle, but Jesus didn't give him an answer. Herod despised Jesus and didn't defend nor help Him. Today people ask Jesus to perform a miracle to believe in Him. Otherwise, they reject Jesus, Luke 23:7-11.

Third, Simon of Cyrene, a man passing through the crowd, carried Jesus' cross, not knowing what is going on around him. Still, these days people carry the cross around their necks and don't realize the meaning and the power of the cross, Luke 23:26.

Fourth, the daughters of Jerusalem and a group of people watched everything, and when they saw Jesus' suffering, they became emotional, cried, and sympathized with Him. But later, they went back to their routine lives and didn't think of Jesus. During the Holy Week, many sympathize for Jesus' sacrifice on the cross, fast, and attend church services. Later, they return to their worldly lives until next year's Holy Week or religious holidays, Luke 23:27-30, 35,45.

Fifth, rulers, soldiers, and the criminal on the cross to the left of Jesus mocked Him and underestimated His work on the cross. Still, we see many people who disrespect Jesus and deny that Jesus is the Son of God who came to earth in human flesh to carry our sins and pay for the penalty of our sins, so we are reconciled with God and have eternal life, Luke 23: 35-39.

Sixth, the criminal on the cross to the right of Jesus who, through faith, recognized that Jesus is the Son of God and Lord, confessed his sin, believed in eternal life, and asked to participate in Christ's kingdom. Jesus immediately granted him forgiveness and the promise of eternal life. This criminal represents the believers who, by faith repent, accept Jesus as their personal Savior and believe in eternal life in Heaven in the presence of God, Luke 23:40-43.

Let's examine ourselves and see which group we belong to. Have you, by faith, received Jesus as your personal Savior? "Examine yourselves as to whether you are in the faith. Test yourselves. Do you not know yourselves, that Jesus Christ is in you? Unless indeed you are disqualified. But I trust that you will know that we are not disqualified." 2 Corinthians 13:5-6. The abundant blessing of God be upon you all.

ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ

Պաշտօն պիտի կատարուի.....

Ապրիլ 18

ՆՐԷՆԱԸՄ ԹՈՒՍԸՆԻ մահուան առաջին տարելիցին առիթով, խնդրանքով ամուսնոյն Պապ Թուսընի, զաւակներուն ձէրի Թուսընի եւ Բապ եւ տիկնոջ Սինթիա Թուսըններու եւ զաւակներուն: *Այս առիթով Ս. Խորանին ծաղիկներ կը նուիրեն:*

ԶԱՊԵԼ ՊԱՍՄԱՅԵԱՆԻ հոգիին համար, խնդրանքով զաւակներուն՝ Հէլեն եւ ամուսնոյն Մարվին Գաբրիէլեաններու, Քէթրին Պետրոսեանի, Ռաֆսի եւ ամուսնոյն Լեւոն Յարութիւնեաններու, Տիգրան Պասմանեանի եւ իրենց ընտանիքներուն: *Այս առիթով Ս. Խորանին ծաղիկներ կը նուիրեն:*

ԿԱՐՕ ԳԱԼԻՆԵԱՆԻ մահուան 3-րդ տարելիցին առիթով, ինչպէս նաեւ համայն **ԳԱԼԻՆԵԱՆ, ՎԱՐԴԱՆԵԱՆ, ԶԱՄԻԶԵԱՆ** եւ **ՄԻՔԱԷԼԵԱՆ ԸՆՏԱՆԻՔՆԵՐՈՒ** ննջեցեալներու հոգիներուն համար, խնդրանքով պարին՝ Երան Գալինեանի, զաւակներուն՝ Հրանդ եւ տիկնոջ՝ Իրեն Գալինեաններու, Յարութ Գալինեանի, եւ թոռներուն՝ Կերիի եւ Հերըլտի, Բրոջ՝ Մարի Գալինեանի, Եղրայրներուն՝ Փօլ եւ տիկնոջ՝ Արաֆսի Գալինեաններու, իրենց զաւակներուն Տօֆ. Սուզի Գալինեանի եւ Հերըլտ Գալինեաններու, Վարուժ Գալինեանի, իր դուստրերուն Տօֆ. Հայկուշ Գալինեանի, Մարալ Գալինեանի եւ Սէրկէյ Պրունջէնֆոյի եւ ընտանիքին: *Այս առիթով Ս. Խորանին ծաղիկներ կը նուիրեն:*

ՓՕԼ ՄԻՄՈՆԵԱՆԻ 3-րդ տարելիցին առիթով, խնդրանքով դուստրին Սթեֆընի Սիմոնեանի, թոռներուն Ժանա եւ ամուսնոյն Դաւիթ Էտինկզներու եւ Էլըսընի, ծոռներուն Դաւիթ եւ Էլիյանա Էտինկզներու: *Այս առիթով Ս. Խորանին ծաղիկներ կը նուիրեն:*

ՊԼԷՆՇ ԵԱՎԱՆԵԱՆԻ մահուան 31-րդ տարելիցին առիթով, խնդրանքով՝ զաւակին Տակըս եւ տիկնոջ՝ Էմիլի Եավանեաններու, թոռնիկին Գէլիի եւ ամուսնոյն Էրըֆ Րէյմըրներու եւ ծոռներուն Լօլա Պլէնշ եւ Կաննըր Ուալթըր Րէյմըրի: *Այս առիթով Ս. Խորանին ծաղիկներ կը նուիրեն:*



HOKEHANKIST

will be said for.....

April 18

FRANCES TUSAN on the first year of her passing, requested by her husband Bob Tusan, sons Jerry Tusan and Rob and wife Cynthia Tusan and their children. *Altar flowers are donated in her memory.*

ZABEL BASMAJIAN, requested by her daughters Helen and husband Marvin Caprelian, Kathy Bedrosian, Roxie and husband Levon Harutunian, son Dikran Basmajian and their Families. *Altar flowers are donated in her memory.*

GARO KALINIAN on the 3rd year of his passing, and also all the deceased members of the **KALINIAN, VARTANIAN, CHAMICHIAN AND MIKAELIAN** families, as requested by his widow Yeran Kalinian, children Hrant and wife Eren Kalinian, and Harout Kalinian, grandchildren Gary and Harold, sister Mary Kalinian, brothers Paul & wife Araksi Kalinian, and their children Dr. Suzi Kalinian and Harold Kalinian, Varouj Kalinian and his daughters Dr. Haigoush Kalinian and Maral Kalinian Sergei Brountchenko, Sr. and Family. *Altar flowers are donated in their memory.*

PAUL SIMONIAN, on the 3rd year of his passing, requested by his daughter Stephanie Simonian, grandchildren Jhana & huasband David Eddings and Alison Simonian, and great grandchildren David and Aviana Eddings: *Altar flowers are donated in his memory.*

BLANCHE YAVANIAN on the 31th year of her passing requested by her son Douglas & wife Emily Yavanian, granddaughter Kellee Ann & husband Eric Ramer, and great grandchildren Gunner Walter & Lola Blanche Ramer. *Altar flowers are donated in her memory.*



ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ

Պաշտօն պիտի կատարուի.....

Ապրիլ 25

Հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի ԿԼԷՏԻՍ ԺԱՄԿՈԶԵԱՆԻ մահուան 4-րդ տարելիցին առիթով, ՓԻԹԸՐ ԺԱՄԿՈԶԵԱՆԻ, ԽԱԶԻԿ ՄԱՆՈՒԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆԻ, ԵՆ ՎԱՐԴՈՒՀԻ (ՐՕԶ) ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆԻ հոգիներուն համար: Այս առիթով Ս. Խորանին ծաղիկներ կը նուիրեն:

Հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի ԳՐԻԳՈՐ ԱԲԳԱՐԵԱՆԻ, ԱՆԴՐԱՆԻԿ ՔՈՒԼԱՃԵԱՆԻ, ՊԵՏՐՈՍ ՔՐԻՅՈՂԼԵԱՆԻ ԵՒ ԿԱՐՊԻՍ ՔՐԻՅՈՂԼԵԱՆԻ հոգիներուն համար, ինդրանօ՞ Ընտանիքներուն: Այս առիթով Ս. Խորանին ծաղիկներ կը նուիրեն:

Հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի ՆԱՀԱՊԵՏ ԵՒ ԿԻԼԻԶԱՐ ՄՍՐԼԵԱՆՆԵՐՈՒ, ԹԱՄԱՄ ՄՍՐԼԵԱՆԻ, ԱԼԹՈՒՆ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆԻ, ՅՈՎԱԿԻՄ ԵՒ ԽՆԿՈՒՀԻ ԿՈԶՈԼՈԶԵԱՆՆԵՐՈՒ հոգիներուն համար, ինդրանօ՞ իրենց Ընտանիքներուն: Այս առիթով Ս. Խորանին ծաղիկներ կը նուիրեն:

HOKEHANKIST

will be said for.....

April 25

Hokehankist will be said for GLADYS JAMGOTCHIAN on the 4th year of her passing, PETER JAMGOTCHIAN, KHATCHIG MANOOG HAMPARTZOOMIAN, and VARTOOKIE (ROSE) HAMPARTZOOMIAN, requested by the families. Altar flowers are donated in their memory.

Hokehankist will be said for KRIKOR APKARIAN, ANTRANIG KOULADJIAN, BEDROS KRIOGLIAN AND GARBIS KRIOGLIAN, as requested by their family. Altar flowers are donated in their memory.

Hokehankist will be said for NAHABED & GULIZAR MESSERLIAN, TAMAM MESSERLIAN, ALTOUN HOVHANESIAN, AND HOVAGIM & CHNKUHIE KOTCHOLOSIAN, requested by their families. Altar flowers are donated in their memory.

New Rules

Years ago there was a little one-room schoolhouse in the mountains of Virginia where the boys were so rough that no teacher had been able to handle them. A young, inexperienced teacher applied, and the old director scanned him and asked: "Young fellow, do you know that you are asking for an awful beating? Every teacher that we have had here for years has had to take one." He thought for a moment and said, "I will risk it."

The first day of school came, and the teacher appeared for duty. One big fellow named Tom whispered: "I won't need any help with this one. I can lick him myself." The teacher said, "Good morning, boys, we have come to conduct school." They yelled and made fun at the top of their voices. "Now, I want a good school, but I confess that I do not know how unless you help me. Suppose we have a few rules. You tell me the rules you want, and I will write them on the blackboard." One fellow yelled, "No stealing!" Another yelled, "On time." Finally, ten rules appeared on the blackboard. "Now," said the teacher, "a law is not good unless there is a penalty attached. What shall we do with anyone who breaks the rules?" "Beat him across the back ten times without his coat on," came the response from the class. "That is pretty severe, boys. Are you sure that you are ready to stand by it?" But another yelled, "I second the motion." So the teacher said, "All right, we will live by them! Class, come to order!"

In a day or so, "Big Tom" found that his lunch had been stolen. The thief was located — a little hungry fellow named Jim, about ten years old. "We have found the thief and he must be punished according to your rule — ten stripes across the back. Jim, come up here!" the teacher said. The little fellow, trembling, came up slowly with a big coat fastened up to his neck and pleaded, "Teacher, you can lick me as hard as you like, but please, don't take my coat off!"

